



ՆՈՐ ԳԻՐՔ

ԵՎ ԱՍԱՑ ԱՆԱՀԻՏԸ... «ԵՍ ԿԳԱՄ ԲԵՉ ՄՈՏ»

Մեզ քաջածանոթ բեռնաճանաչող, թարգմանչի, լրագրողի, Վրաստանի ու Հայաստանի գրողների միությունների անդամ, «Կամուրջ» տարեգրքի խմբագիր, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ Անահիտ Բոստանջյանի «Ես ամենուր եմ...» չափածո ժողովածուն լույս տեսավ հետմահու, 2018թ.-ին, Թբիլիսիի «Ինտելեքտ» հրատարակչությունում: Նոր ժողովածուում ամփոփված են Անահիտ Բոստանջյանի անտիպ գործերը...



ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ԵՍ ԱՄԵՆՈՒՐ ԵՄ...

Թե ինչ աշխատանք կտաներ իր հերթական գրքի վրա, ինչ խորագրեր կընտրեր, ինչը կհղկեր... Ցավոք, գիտեր միայն ինքը՝ այդ նախանձախնդիր հեղինակը, որի տողերը հիմա, երբ նա ֆիզիկապես հեռացել է մեզանից, ասես, նորովի են իմաստավորվել ու դարձել ընթերցողի հոգու թարգմանը: Անահիտ Բոստանջյանի ինքնատիպ ու անկրկնելի տաղանդը, որին հաղորդակցվելու զարմանալի պահանջ կա, հիրավի, ուրույն գուներանգով է հարստացնում Վրաստանի հայ գրական աշխարհը ու մեր սրտերը...

2017-ի Ամանորի օրերին՝ հունվարի 8-ին, Անահիտը հեռացավ մեզանից: Նրան հուղարկվող երեք Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների «խոջիվանք» պանթեոնում: Արդեն երկրորդ տարին է, որ մեր գործընկերը մեզ հետ չէ, չի մասնակցելու ամանորյա սեղանին, չի ասելու իր սրտաբուխ կենացը... Եվ մենք նորից զգալու ենք նրա բացակայությունը, ինչն այնքան ակնհայտ է, ընդհանրապես, նաև քաղաքի հայ մշակութային կյանքի մեծ ու փոքր անցուղարձերում...

Մեզ հետ հիմա անտիպ գործերի այս սովոր հատորն է, որը, ոչ այլ ինչ է, քան բանաստեղծի մարդկության առջև բացված հոգին, որը նա այնպես անսքող պարզել է բոլորին... Հատորի յուրաքանչյուր բանաստեղծություն՝ Աշխարհի չարին ու բարուն ոչ անտարբեր հեղինակի սրտի հեքը, սրտի ուրախ կամ տխուր ծիչն է... Նրա՝ սիրով լի խոհերը Հայաստան-Վրաստան հայրենիքների մասին, նրա՝ մտերմիկ ու հուզաշունչ գրույցները ծննդավայր Թբիլիսիի հետ...

Այդ գրքի էջերում ընթերցողը հանդիպում է Կյանքի հետ առերեսվող, Կյանքը սիրող եւ նախատող, Կյանք-արժեքը փնտրող հոգեհարազատ մի հեղինակի, ում խորաթափանց բացահայտումների շնորհիվ՝ հայտնաբերում է, հաճախ, իրեն իսկ անծանոթ մնացած, իր սեփական ներաշխարհը: Եվ նորից ու նորից, հեղինակի հետ միասին, խորհում՝ հոգին մաքրելու, զուլալելու անհրաժեշտության մասին...

Ինչպես նշում է գրքի իր սեղմ բնութագրության մեջ նրա խմբագիրը՝ բանաստեղծ, գրականագետ Լեւոն Սարգսյանը՝ «Ես ամենուր եմ» ժողովածուն գրված է բանաստեղծական ժանրի ե՛լ դասական, ե՛լ ազատ ոճերով, ինչը նորից ու նորից հեղինակի անսպառ կարողությունների փաստումն է:

Մի նմուշ ժողովածուից.

* * *

Ես կգամ քեզ մոտ,
կգամ այնպես, ինչպես ծյունը
եկավ այն տարի...
Իսկ ծյունը,
(հիշո՞ւմ ես)
այդպես էլ չեկավ
այն տարի...

ՋՈՒԼԻԵՏԱ ԲՎԻԿԼՅԱՆ

ԹՈՂ ԼԻՆԻ ԲՎՐԻ

Մորս սրտի պես,
խղճի պես իմ մոր
Թող լինի տարին,
Այս տարին մեր մոր...
Թող տարին այս մոր՝
Բարի, շատ բարի,
Փոխի դավադիր
Միրտը աշխարհի:
Որ իրար սիրեն
Ազգերը բոլոր՝
Մորս սրտի պես,

խղճի պես իմ մոր...
խաղաղությունը դրոշակ լինի՝
Մեր ու ջերմություն
Ամեն տուն մտնի...

Մորս սրտի պես,
խղճի պես իմ մոր
Թող լինի տարին,
Այս տարին մեր մոր...

ԳԵՎՈՐԳ ՀԱՅԱՍՍ

Ախալքալաքի

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՒՄ

2018-Ի ԱՄԱՆՈՐՅԱ ԳԻՇԵՐՆ ԻՆՁ ՍՈՎՈՐԵՑՐԵՑ ՍԻՐԵԼ ՆՈՐ ՏԱՐԻՆ...

Անհնար էր նյութը գրել առանց արցունքի: Եվ կամ սովորական ձեռագրի մեջ, այնպես ինչպես մեր թերթում, հենց թեկուզ այս համարում հանդիպող ամանորյա նյութերի նման: Սա իրական, թեև թվում է անիրական ու երեւի միայն հեքիաթում հանդիպող պատմություն էր: Պատմություն՝ առանց չափազանցումների եւ կամ նյութը գեղեցկացնող հնարքների...



Կենտրոնում՝ Կարինեն Արմանի եւ Նարինեի հետ

Կար ու կա մի աղջնակ: Շատ բարի ու ջերմ, շատ անկեղծ ու ժպտերես, շատ գեղեցիկ ու շատ հմայիչ: Նրա կյանքում ամեն ինչ տակնուվրա եղավ, երբ կորցրեց Սորը: 16 տարեկան էր: Կյանքի հարվածն ուժեղ էր, անդառնալի, գրեթե կործանարար: Խորք հոր հետ մեկ հարկի տակ չապրելով, Կարինեն տեղափոխվեց վարձով բնակարան: Մեռավ էր: Օրնիբուն,

առանց հանգստի անդադար աշխատում էր, մթին տանից դուրս էր գալիս եւ մթին՝ վերադառնում: Միակ լուսավոր կետը՝ Նարինեն էր: Նարինե Նազարեթյանին վիրահայ համայնքում շատերս գիտենք, ծնունդով Ախալքալաքից է եւ այժմ իր երեք զավակի՝ Անի, Արմինե եւ Էդուարդ Դուշչյանների հետ ապրում է Թբիլիսիում: Որոշ ժամանակ որպես պարուսույց է, ապա՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում նախակրթարանի ուսուցչուհի աշխատելով, Նարինեն ճանաչել էր Կարինեին, ով պարի խմբի սաներից մեկն էր: Մի անբացատրելի սեր ու կապ կար երկուսի միջեւ, նույնիսկ այն ժամանակ, երբ Կարինեի մայրը ողջ էր: Շատերը մտածում էին, թե մայր ու դուստր են:

Կյանքի նախախնամությունն էր երեւի...
- 2017-ի հուլիսի 27-ն էր, - պատմում է Կարինեն: - Ես արդեն մենակ ապրում էի վարձած բնակարանում: Նարինեի ծնունդն էր: Սովորական համաձայն գնացի, շնորհավորեցի: Խնդրեց իրենց տանը գիշերել: Ես մերժեցի, որովհետեւ աշխատանքի էի հաջորդ օրը: Որոշ ժամանակ անց հիվանդացա եւ նույնիսկ մի քանի օր հիվանդանոցում պառկեցի: Հյուսվել էի, գերհոգնածությունից էր, 12 տարեկանից աշխատում եմ... Նա եկավ, հավաքեց իրերս եւ ասաց, որ այսուհետ իրենց տանն եմ ապրելու, դառնալով իր երրորդ դուստրը: Ըստ որում կտրուկ ասաց, որ աշխատանքի այլեւս չեմ գնալու:

Դատարկ խոսքեր չէին: Նարինեի ու Կարինեի սերը մոր ու դստեր անխախտ կապը խորիրդանչեց: Աղջիկը ծանր մանկություն էր ունեցել: Մայրը բուժքույր էր եւ հաճախ գիշերային հերթափոխի էր: Կյանքը ստիպել էր երեխային մեծ փոքրիկ լինել՝ տան կենցաղային հոգսն ու լուծո՞ր եւ սեփական ու նաև ընտանիքի անելիքները ինքնուրույն լուծել ու որոշել:
- Դժվարությամբ համաձայնեցի: Անհարմար էի զգում, - պատմում է Կարինեն: - Բայց այդ զգացումը վերացավ առաջին իսկ պահից: Ես կրկին Մայր ձեռք բերեցի. ու նրան այդպես էլ դիմում եմ առ այսօր: Մայրիկս այնքան ջերմ ու հոգատար է իմ հանդեպ, որ ես ինձ Անիի ու Արմինեի մոտ երբեմն վատ եմ զգում: Նա բոլոր Մայրերի նման գիշերներ է լուսացրել իմ կողքին ինձ հետ խոսելով, ինձ հետ արտասովորով ու ... բուժելով: Չմայած նրա, որ ինքն էլ ծանրաբեռնված աշխատանքային առօրյա ունի: Չլինեք իմ գտած ու ինձ գտած Նարինե մայրիկը, այսօր միգուցե ես էլ չլինեի:

2018 թվականի Ամանորյա գիշերն ու ողջ տարին Կարինեի կյանքում հաստատ ամենահիշվողն է լինելու: Նրա առաջին Մայրը Հավերժի ճամփորդ էր դարձել հինգ տարի առաջ հունվարի 11-ին: Այդ օրից Կարինեն ատել էր հունվարն ու Նոր տարվա ուրախությունը:

- Ամեն տարի ողջ գիշեր լալիս էի, - պատ-

մում է նա, - փակում ականջներս, որպեսզի չլսեմ հարեւան տներից ու փողոցներից լսվող ծիծաղը, երաժշտությունն ու ուրախ գմփոցները: Բայց 2018-ի Ամանորն ասես հեքիաթ լինեք: Ես արտասովում էի, արտասովում երջանկությունից, արտասովում Աստծո իմ հանդեպ բարեգթությունից, նորից Մամա ասելու քաղցրությունից... ընտանիքում իմ ներկայությունից: Նույն շուքով տոնեցինք իմ ծննդյան օրը: Իմ առաջին ծնունդն էր, որն անցավ այդքան ուրախ, այդքան գեղեցիկ, տոնական ու ընտանեկան սիրո, ջերմության մեջ:

2018-ը Կարինեի համար մի մեծ նվեր էր պատրաստել՝ Արմանին: Արմանն այն սպիտակ ձիով արքայազնն էր, ով պետք է անպայման հայտնվեր հեքիաթի վերջում ու նոր սկիզբ դներ գրվող մեկ այլ հեքիաթի: Նյութիս Սոխրոտիկին՝ Կարինեին, սպիտակ ձիւն հեծած արքայազն Արմանը, տեսավ սոցցանցերից մեկում, սիրահարվեց: Կարինեն երկար ժամանակ արգելափակել էր իրեն անընդհատ «անհանգստացնող» տղային: Մի օր Նարինե մայրիկը նկատեց, նստեց դստեր կողքին ու որոշեց բաց չթողնել աղջկա դուռը թակող երջանկությունը: Մեպտեմբերի 23-ին Արմանը վերադարձավ Թբիլիսի՝ իր ծննդավայր, Կարինեին տեսնելու, նրան ծնողների հետ ծանոթացնելու եւ ամուսնության առաջարկ անելու: Ամուսնացան: Ուրախ վերջաբանով տխուր պատմությունը է՛լ ավելի կապեց Արմանին Կարինեի հետ, է՛լ ավելի շատ սիրելու եւ պաշտպանելու ցանկություն ու պատասխանատվություն առաջացրեց: Նորակազմ ընտանիքն այժմ Իսպանիայում է: Արմանն իր սրճարանն ունի եւ երկուսով են տնօրինելու իրենց կարողությունը:

- Շատ բարի ծնողներ ունի Արմանը,- ասում է Կարինեն,- իրենց ջերմությունն ինձ այնքան հաճելի է: Երջանիկ եմ, իսկապես շատ երջանիկ... Փաստորեն կյանքում հրաշքներ լինում են ու Սոխրոտիկներն էլ՝ ապրում: Նրանցից մեկն էլ, հավանաբար, ես եմ... Շատ կուզեի, որ նրանք, ում կյանքը փորձություն է պատրաստել եւ մանավանդ այն հասակում, երբ դեռ ոչինչ չգիտեն... երբեք չկտրվեն: Մի դուռ անպայման կբացվի, մի հրաշք անպայման կհարականանա, մութ գիշերին անպայման կհաջորդի լուսաբացը... Հավատացեք, հույս փայփայեք ու երազեք, մանավանդ Ամանորի գիշերը:

Սիրեք Ամանորը, սիրեք կյանքը ու երբեք մի հուսահատվեք: Միգուցե միակն եմ, որ այդպես եմ մտածում, չգիտեմ, բայց կուզեի ասել՝ նույնիսկ Մայրը կարող է վերածնվել...

Շարունակվող հրաշքներով տարիներ ձեզ՝ նյութիս Սոխրոտիկ-Արքայադուստր ու նրա Բարի փերի, վերածնված Նարինե մայրիկ... Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ



Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկկողմ ու բազմակողմ ձեւաչափով համագործակցության օրա-

Դեկտեմբերի 27-ին, Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային այցի շրջանակում, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Մոսկվայում հանդիպում է ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

կարգին վերաբերող հարցեր, կարծիքներ փոխանակել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

- Ես արդեն կորցրել եմ հաշիվը, թե սա մեր որե-

րորդ հանդիպումն է: Բայց օդանավակայանում արարողակարգի աշխատակիցներն ինձ հուշեցին, որ ես Ռուսաստանի Դաշնություն ամենահաճախ այցելող օտարերկրյա ղեկավարներից եմ, ավելի կոնկրետ՝ ես ղեկավարների եռյակում եմ: Վստահ եմ, կարծում եմ՝ դա ընդգծում է մեր առանձնահատուկ ռազմավարական հարաբերությունների հա-

մատեքստը: Վստահ եմ, որ մեր հարաբերությունների այսպիսի դիմամիկան կպահպանվի: Հույս ունեմ, որ նաեւ կզարգանա: Իհարկե, մենք մյուս տարի սպասում ենք Ձեզ պաշտոնական այցով Հայաստանում: Դա մեզ համար շատ ուրախալի կլինի,- Կրեմլում ՌԴ նախագահի հետ հանդիպման ժամանակ մշտել է Նիկոլ Փաշինյանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍԱՔԱՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

2019 թվականի հունվարի 1-ից առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման ներմուծվող ապրանքների արժեքային չափը կրճատվելու է 3 անգամ, իսկ կշիռը՝ 2 անգամ: Փոփոխությունները նախատեսված են Եվրասիական տնտեսական համընդհանուր խորհրդի՝ 2017թ. դեկտեմբերի 20-ի «Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի վերաբերյալ» որոշմամբ:

Պետական եկամուտների կոմիտեն ֆիզիկական անձանց տեղեկացում է, որ նոր կարգավորման համաձայն, եթե ֆիզիկական անձինք ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծեն անձնական օգտագործման ապրանք, որի արժեքը չի գերազանցում 500 եվրոյին համարժեք գումարը, իսկ քաշը՝ 25 կիլոգրամը, ապա որեւէ գանձում չի կատարվի: Չափաքանակները գերազանցելու դեպքում կիրառվելու է մաքսատուր-

քերի եւ հարկերի միասնական դրույքաչափ, այսինքն՝ ապրանքների արժեքի նկատմամբ 30%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1 կիլոգրամի համար 4 եվրոյին համարժեք գումար մշված արժեքը կամ կշիռը գերազանցող մասի համար:

Ընդ որում, կարգավորումները վերաբերում են տրանսպորտային միջոցներով (բացի օդային տրանսպորտից) կամ առանց դրանց ԵԱՏՄ տարածք



ներմուծվող ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման ապրանքներին, բացառությամբ էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, զարեջրի, անձնական օգտագործման ոչ բաժանելի ապրանքների:

ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՀԻՆԳ ՏՊԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ



Անցնող տարվա լավագույններից լավագույնը, անշուշտ, ծանրորդ Սիմոն Մարտիրոսյանն էր, ով 2018 թվականին 109 կգ քաշային կարգում ամենաուժեղ մարդն էր աշխար-

հում, 21 տարեկանում դարձավ աշխարհի չեմպիոն:

Տարվա ամենամասնասելի հաջողությունը գրանցեց ջրացատկի Վլադիմիր Հարությունյան-Լեւ Սարգսյան գույզը: Անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ Հայաստանը մեդալ նվաճեց Եվրոպայի առաջնությունում:

Անցնող տարվա նշանակալի մեդալներից մեկը ծուրո մարզածեղից էր, որտեղ Հա-

յաստանը 13 տարի անց կրկին Եվրոպայի չեմպիոն ունեցավ: Մայրցամաքի ուժեղագույնի կոչումը նվաճեց Ֆերդինանդ Կարապետյանը:

Հայկական սպորտի ոչ հեռակետային մարզածեղում, ինչպիսին հեծանվասպորտն է, մեդալներն առավել մեծ արժեք են նշանակություն ունեն: Հայաստանի հավաքականի անդամ Էդգար Ստեփանյանը Եվրոպայի մինչեւ 23 տարեկանների առաջնությունում առաջինը հասավ եզրագծին՝ դառնալով չեմպիոն: Եվ երիտասարդների մեջ

իրենց մասին խոսել տվեցին պատանեկան Օլիմպիական խաղերի Հայաստանի ներկայացուցիչները: Բուենոս Այրեսի 3-րդ ամառային Օլիմպիական խաղերում ծանրամարտի 77 կգ քաշում Կարեն Մարգարյանը պոկում վարժությունում գլխավերելու պահեց 141 կգ, այնուհետ իրեց 168 կգ եւ երկամարտի 309 կգ արդյունքով դարձավ պատանեկան Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր: Արծաթե մեդալակիր դարձավ հունահռոմեական ոճի ըմբիշ Սահակ Հովհաննիսյանը:

ԿԱՅՆԱՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



Դեկտեմբերի 28-ին, Հայաստանի նախագահի նախնական կայացված պետական բարձր պարգևների հանձնման եւ պարգևավոր կոչումների շնորհման հանդիսավոր արարողությունը:

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի կազմակերպման եւ անցկացման գործում ներդրած նշանակալի ավանդի, դրսևորած բարձր պատասխանատվության եւ նվիրումի համար «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ է հանձնվել Հայաստանի արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ Լեւոն Մինասյանին:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով է պարգևատրվել նաեւ Հանրապետության ծանրամարտի հավաքական թիմի գլխավոր մարզիչ Փաշիկ Ալավերդյանը:

Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում ունեցած վաստակի համար Խաչիկ Ասմարյանին եւ Վաչագան Վարդանյանին շնորհվել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, իսկ Աշոտ Գասպարյանին, Ռուդիկ Մկրտչյանին եւ Կարեն Սարկիսովին Հայաստանի վաստակավոր մարզիչ կոչումներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է

Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակած ընթացիկ-օպերատիվ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համաչափ 2018 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 5.7%-ով: 2017թ.-ի նոյեմբեր ամսվա նկատմամբ ՏԱՑ-ը կազմել է 3.6%:

Ըստ այդ տվյալների, արդյունաբերական արտադրանքի ծավալն այս տարվա հունվար-նոյեմբերին աճել է 4.1%-ով, 2017թ.-ի նոյեմբերի համեմատ՝ 1.1%-ով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, նախորդ տարվա հունվար-օգոստոսի համեմատ, նվազել է 8.1%-ով:

ԱՌԱՅԻՆԸ՝ ՏԱՐԱՏԱՆՔԱՆՈՒՄ

Passport Index-ը կազմել է երկրների հյուրընկալության վարկանիշը, հաշվի առնելով հեղեղալ գործոնները՝ թե քանի երկրի քաղաքացի կարող է այցելել երկիր՝ առանց մուտքի արտոնագրի, կնքել այն մուտք գործելու կամ ստանալ արտահերթ թույլտվություն մուտքի համար:

Ըստ այդ ցուցանիշների, Հայաստանը զբաղեցնում է 29-րդ տեղը, զիջում է հարեւան Թուրքիային (22-րդ հորիզոնական) եւ Իրանին (12-րդ հորիզոնական), սակայն առաջ է անցնում Վրաստանից, որը զբաղեցրել է 51-րդ հորիզոնականը, եւ Ադրբեջանից, որը հայտնվել է 87-րդ հորիզոնականում: Ռուսաստանը Passport Index-ի վարկանիշում զբաղեցնում է 83-րդ հորիզոնականը, իսկ ԱՄՆ-ն՝ 82-րդ:

Առաջին տեղը զբաղեցրել է Կոմորյան կղզիները, քանի որ այստեղ հեշտապես այցելման ռեժիմը գործում է աշխարհի բոլոր 198 երկրների քաղաքացիների համար:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

Դեկտեմբերի 25-ին Հայաստանի գրողների միությունում անցկացված մրցանակաբաշխության արդյունքում, հայտնի դարձան այն գրողները, որոնց ստեղծագործությունները լավագույնն են ճանաչվել տարվա ընթացքում:

Գրողների միության նախագահ Էդվարդ Միրխոնյանի խոսքով, արձակի ժամրում Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակը հանձնվեց Ֆելիքս Բախչինյանին՝ «Մի գիշեր Աթաթուրքի սենյակում» գրքի համար: Պոեզիայի անվանակարգում Ավետիք Իսահակյանի անվան մրցանակը տրվեց Նորայր Գրիգորյանին՝ «Ամեն առավոտ» գրքի համար, իրապարակախոսություն ժանրում Միքայել Նալբանդյանի անվան մրցանակի արժանացավ Արեւշատ Ավագյանը՝ «Տիեզերքի սրտիփոցը» գրքի համար: Դրամատուրգիայի ժանրում Լեւոն Շանթի անվան մրցանակը ստացավ Գուր-

գեն Խանջյանը՝ «Կոլիզեյ 21» չորս պիեսի ժողովածուի համար: Գրականագիտության ժանրում մրցանակը տրվեց Արմեն Ավանեսյանին՝ «Անկախության պոեզիան» գրքի համար, թարգմանություն ժանրում Հովհաննես Մասեհյանի անվան մրցանակի արժանացավ Լեւոն Բլբուլյանը՝ «Քառյակներ» գրքի համար, մանկական գրականության ժանրում Վախթանգ Անանյանի անվան մրցանակը տրվեց Խաչիկ Մանուկյանին՝ «Փոքրի գորավարը» գրքի համար: Սեւանի հանգստյան տան սահմա-



նած մրցանակը հանձնվեց Սաթենիկ Սկրտչյանին՝ «Այրված կենդանակերպ» գրքի համար, Ծաղկածորի գրողների ստեղծագործական տան սահմանած մրցանակների արժանացան ժամնա Արախաճյանը՝ «Չմեռ պապին ու տղան», եւ Շանթ Սկրտչյանը՝ «Վերադարձ Փանջիռուկ» գրքերի համար:



ԱՌՆԵՏ - (1936, 1948, 1960, 1972, 1984, 1996, 2008)



Խոզուկը ձեզ չի նեղացնի, չէ՞ որ Առնետն ու Խոզը հաճախ ապրում են հարեւանությամբ՝ միեւնույն գոմում կամ փարախում: Առնետը վաղվա օրվա մասին հոգալու կարիք չի ունենա. Խոզը իր բարեկամուհուն կապահովի ամեն անհրաժեշտով:

Առնետներ, մի՛ փորձեք կյանքի առաջին շարքերում գտնվել. կուլիսների ետեւում կյանքը ավելի խաղաղ է լինում:

ՑՈՒԼ - (1937, 1949, 1961, 1973, 1985, 1997, 2009)



Տարին միօրինակ չի լինի նրանց համար, ովքեր ծնվել են Ցուլի հովանավորության ներքո:

Ձեզ սպասվում է մե՛րթ սեւ, մե՛րթ ճերմակ գոտի: Դրանում, ի դեպ, կա դրական կողմ. դուք չեք հասցնի կայնել-մնալ որեւէ խնդրի, եւ այդպիսով ժամանակը շուտ կթռնի՝ ինչպես կինոյում: Եվ միայն վերջին արդյունքները ի մի բերելիս՝ դուք կհասկանաք, որ իրականում ամեն ինչ ընթանում էր հենց այնպես, ինչպես պետք էր:

ՎԱԳՐ - (1938, 1950, 1962, 1974, 1986, 1998, 2010)



Վագրի տարում ծնվածների առջեւ Խոզը կբացի բոլոր դռները:

Մեր Հովանավորուհին ձեզ շռայլորեն շնորհում է բազմաթիվ ծրագրեր եւ աներեւակայելի էներգիա: Խոզը այդ կերպ փոխհատուցում է վերջին ոչ այնքան հաջող երեք տարիները՝ թույլ տալով Վագրին ճակատագրական ցատկ անել դեպի առաջ:

ՃԱԳՐ (ԿԱՏՈՒ) - (1939, 1951, 1963, 1975, 1987, 1999, 2011)



Ճագարի տարում ծնվածները Խոզուկին համակրելի են, եւ նա կսատարի ձեր բոլոր մեկնարկները՝ կապված «բույնի» վերանորոգման հետ, նույնիսկ կլուծի հիպո-

ԻՆՉ Է ԽՈՍԱՆՆՈՒՄ ՄԵՉ ԽՈՉՈՒԿԸ

Ինչպիսի՞ կյանք է խոստանում մեզ՝ յուրաքանչյուրիս Դեղին Հողե Խոզը, ի՞նչ սպասենք նրանից եւ ինչպե՞ս կողմնորոշվենք: Հենց սկզբից ասենք, որ տարվա Տիրուհին իր հոգատարությունից եւ ուշադրությունից դուրս չի թողնի ոչ մի աստղանիշի:



թեկով բնակարանի խնդիրը: Պատեհ ժամանակն է գնել անշարժ գույք, կատարել վերանորոգումներ, փոխել ինտերյերը, բնակարանի կահույքը: Եվ, եթե դա ձեզ համար կարելի էր անհրաժեշտություն է, կարելի է ծրագրում ընդգրկել նաեւ մանկան սենյակի վերանորոգումը:

ՎԻՇԱՊ - (1940, 1952, 1964, 1976, 1988, 2000, 2012)



Վ ի շ ա պ ը փոքր-ինչ լարում եւ վախեցնում է Խոզին: Որպեսզի տարվա Տիրուհին ձեր հանդեպ բարեհաճ լինի ու լավ տրամադրվի, խուսափեք հեռավոր եւ խնդրահարույց ծրագրերից. ձեր ողջ կրակը ուղղորդեք անձնական եւ ընտանեկան խնդիրների կարգավորմանը:

Տարվա Տիրուհին արդեն նախապատրաստում է այն պատմական հանդիպումը, որը ձեզ կհասցնի ամուսնության շեմին:

ՕՁ - (1941, 1953, 1965, 1977, 1989, 2001, 2013)



Օձի տարում ծնվածներին Խոզը չի համակրում եւ չի ափսոսի ու ձեզ փորձության կենթարկի՝ կստուգի ձեր դիմացկունությունը: Բայց Օձը պատվով դուրս կգա այդ փորձությունից: Նրա իմաստությունը եւ համբերությունը թույլ կտան համբերատարությամբ սպասել ավելի բարի օրերի, եւ այդ ժամանակ տարվա Տիրուհու գայրույթը կփոխվի գթասրտության ու շնորհների:

Ամռան վերջում ձեր ամենամեծ վիրական երազանքը կդառնա իրականություն: Խոզը խորհուրդ է տալիս Օձին՝ խուսափել խմբված մարդկանցից ու ամբոխից եւ ճանապարհային վտանգավոր իրավիճակներից:

ՉԻ - (1942, 1954, 1966, 1978, 1990, 2002, 2014)



Խոզը Չիուն խոստանում է հովանավորություն եւ աջակցություն: Բայց աշխատելու եւ քրտնելու անհրաժեշտություն, այնուամենայնիվ, կունենաք: Չիու համար խիստ վտանգավոր է կուտակված միջոցները կասկածելի ձեռնարկումներում ներդնելը: Դա հավասարազոր է ծանր աշխատանքով ձեռք բերվածը լցնել ֆինանսական խաբեբաների անհատակ ու անտակ գրպանները: Նման բան չանեք, հակառակ դեպքում, դուք կզրկվեք ողջ ունեցվածքից:

Ոչ մի փողային արկածախնդրություն:

ԱՅԾ - (1943, 1955, 1967, 1979, 1991, 2003, 2015)



Այժմ կհայտնվի Խոզուկի սիրելիների շարքում: Այնպես որ, ձեզ համար տարին կլինի շատ ու շատ հաջող: Ամենահաճելի թերեւս այն է, որ ուրախալի շատ իրադարձություններ կիրականան իրենք իրենց: Ձեզ նույնիսկ հարկ չի լինի որեւէ ջանք թափել այդ ուղղությամբ: Եվ «կաղամբն» էլ կբավականացնի ողջ տարվա համար:

ԿԱՊԻԿ - (1944, 1956, 1968, 1980, 1992, 2004, 2016)



Ձեզ համար Խոզը պատրաստել է շատ կարելի իրադարձություններ, եւ դրանցից մի քանիսը կարող են դառնալ ճակատագրական: Բացառված չէ, որ ձեր կյանքում հայտնվի ազդեցիկ հովանավոր: Կամ ձեր կոլեկտիվում տեղի ունենա ձեզ համար ճակատագրական ծանոթություն, որը սկս-

վի ծառայողական սիրավեպից եւ ավարտվի Մենդելսոնի քայլերգով:

ԱՔԼՈՐ - (1945, 1957, 1969, 1981, 1993, 2005, 2017)



Աքլորը Խոզին ընկեր չէ: Տարվա Տիրուհուն գրգռում է Աքլորի կոտրատվելը եւ կեցվածամոլությունը, դատարկաբանությունն ու նրա անգործ աքլորային կյանքը:

Դուք պետք է խուսափեք արմատական փոփոխություններից, ավելի լավ է լուռ ու խաղաղ սպասել ամենախաղաղ ժամանակների եւ «ծուղուղուն» շատ բարձր չինչեցնել:

ՇՈՒՆ - (1946, 1958, 1970, 1982, 1994, 2006, 2018)



Շունը իր իշխանությունը Խոզին փոխանցելով՝ նախապես ստանում է Շանը սատարելու համաձայնություն:

Հավանաբար, տարին չլինի այնպես պայծառ ու անամպ, ինչպիսին կուզենայիք լինել: Բայց տարվա Տիրուհին կհոգա արեւելյան օրացույցով իր մերձավոր հարեւանի կարիքները եւ կապահովի նրան «մստո ոսկորով»: Իսկ Շանը խորհուրդ է տրվում հարմարվել կյանքի հանգամանքներին եւ զգուշությամբ ընտրել, թե ում կծել, ում դեմ պոչ խաղացնել:

ԽՈՉ - (1935, 1947, 1959, 1971, 1983, 1995, 2019)



Խոզի տարում ծնվածները ստիպված են հույս դնել միայն իրենց վրա, հենվել միայն իրենց ընդունակություններին եւ ուժեղ կողմերին: Բարեբախտաբար, դուք ունեք բազում արժանիքներ, իսկ դա նշանակում է, որ ունեք հաջողության հասնելու բոլոր շանսերը:

Ձեր կյանքում սկսվում է նոր բոլորաշրջան եւ տրվում է կյանքը նոր էջից սկսելու հնարավորություն: Իսկ թե ի՞նչ կգրվի նրա վրա՝ կախված է միայն ձեզանից:



2019-Ը «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՏ



ՀՈՒՆՎԱՐ					ՓԵՏՐՎԱՐ					ՄԱՐՏ					ԱՊՐԻԼ					ՄԱՅԻՍ					ՀՈՒՆԻՍ				
Երկ.	7	14	21	28	4	11	18	25	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24				
Երք.	1	8	15	22	29	5	12	19	26	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25			
Չրք.	2	9	16	23	30	6	13	20	27	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26			
Հինգ.	3	10	17	24	31	7	14	21	28	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27			
Ուրբ.	4	11	18	25	1	8	15	22	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28			
Շաբ.	5	12	19	26	2	9	16	23	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29			
Կիր.	6	13	20	27	3	10	17	24	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30			

ՀՈՒՆԻՍ					ՕԳՈՍՏՈՍ					ՍԵՊՏԵՄԲԵՐ					ՀՈԿՏԵՄԲԵՐ					ՆՈՅԵՄԲԵՐ					ԴԵԿՏԵՄԲԵՐ				
Երկ.	1	8	15	22	29	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30		
Երք.	2	9	16	23	30	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31		
Չրք.	3	10	17	24	31	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25			
Հինգ.	4	11	18	25	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26			
Ուրբ.	5	12	19	26	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27			
Շաբ.	6	13	20	27	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28			
Կիր.	7	14	21	28	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29			

ՀՈՒՆՎԱՐ. 1, 2 - Նոր տարի, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ջրօրհներ: **ՄԱՐՏ.** 3 - Մայրության օր, 8 - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ.** 9 - Վրաստանի ազգային միասնության օր, 26 - Կարմիր ուրբաթ, 28 - Սուրբ Ջատիկ, 29 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՅԻՍ.** 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - Վրաստանի պետական անկախության վերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 28 - Մարիամորա: **ՀՈԿՏԵՄԲԵՐ.** 14 - Սցիսթորա: **ՆՈՅԵՄԲԵՐ.** 23 - Գիորգորա: Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են: - **ՀՈՒՆՎԱՐ.** 5 - Ծրագալույցի տոն, 6 - Սուրբ Ծնունդ եւ Աստվածահայտնության տոն (Սկրտոթյուն), 7 - Հանգուցյալների հիշատակի օր: **ԱՊՐԻԼ.** 19 - Կարմիր ուրբաթ, 21 - Սուրբ Ջատիկ, 22 - Հանգուցյալների հիշատակի օր, 24 - Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: **ՀՈՒՆԻՍ.** 28 - Պայծառակերպություն, 29 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 18 - Վերափոխում, 19 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍԵՊՏԵՄԲԵՐ.** 15 - Խաչվերաց, 16 - Հանգուցյալների հիշատակի օր:

«Վրաստան» թերթի հաջորդ համարը լույս կտեսնի հունվարի 15-ին:

<p>Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ</p>	<p>Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com</p>	<p>Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն</p>	<p>“ВРАСТАН” Тбилиси, Грузия «VRASTAN» Georgia, Tbilisi Индекс 66445</p>
--	---	--	--